ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29
Հեռ.՝ (010) 77-81-22

№ 9/14-2537 «25» 12 2020թ.

Ա/Ձ «Էդուարդ Սամսոնի Սահակյան» -ի տնօրեն
Էդուարդ Սահակյանին

Հասցե՝ ք.Երևան, Նազարբեկյան 1Բ բն 31. (ՀՎՀՀ 27953903)

Հարգելի՛ պարոն Սահակյան,

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ա/Ձ «Էդուարդ Սամսոնի Սահակյան»-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 22.07.2020թ. կնքված Տպագրության աշխատանքների կատարման գնման ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-20/1-7 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն Կատարողն ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օրվա ընթացքում: Համաձայն վերոհիշյալ պայմանագրի՝ աշխատանքների կատարման ժամկետը լրացել է 2020 թվականի սեպտեմբերի 4-ին, սակայն մինչ օրս Ձեր կողմից հավելված 1-ով նախատեսված 45-րդ չափաբաժնի աշխատանքը չի կատարվել:

Համաձայն պայմանագրի 5.3 կետի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Այսպիսով՝ պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ 25.12.2020թ. դրությամբ Ա/Ձ «Էդուարդ Սամսոնի Սահակյան»-ը ենթակա է տուգանքի 6264 ՀՀ դրամ՝ որպես տույժ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Հայտնելով վերոգրյալը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջները՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 21.07.2020թ ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018005018 հաշվեհամարին ենթակա է գանձման 4.490 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (հավելված 1-ով նախատեսված 45-րդ չափաբաժնի գնի 10 տոկոսը):

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝ Մ.ԲԱԲԱՅԱՆ

Կատարող՝
Է.Հակոբյան 010.77-08-82